# Բաբա Թահեր

Վիքիքաղվածք-ից

**Բաբա Թահեր Օրիան** (պարսկերեն՝ *باباطاهر عریان*, *օրիան* արաբերեն նշանակում է *մերկ*, ասվել է որովհետև Բաբա Թահերը կտրված է աշխարհիկություններից) 11-րդ դարի պարսիկ բանաստեղծ և սուֆի խորհրդապաշտ է եղել:



Բաբա Թահերի գերեզմանը Իրանի Համադան քաղաքում

## Քաղվածքներ

- Դու երկնքի գաղտնիքներին դեռ հասու չես, շա՜տ ափսոս,
  Դու չես անցել կյանքի ճամփան ամենատես, շա՜տ ափսոս.
  Դու, որ ապրել ու չես ջոկում լավն ու վատը աշխարհում,
  Քո իսկական բարեկամին ո՞նց ճանաչես, շա՜տ ափսոս:[1]
- Աչքս ու սիրտս մեղքի մեջ են զցում ինձ,
  Աչքս տեսնում, սիրտս տանջվում է թախծից,
  Մի սուր սարքեմ, խրեմ անկուշտ աչքիս մեջ,
  Սիրտս փրկվի նրա նայած - տեսածից:[1]
- Աղամորդուն երեք դարդ կա անընդհատ.
  Ղարիբության, գերության ու յարի դարդ:
  Հեշտ է տանել ղարիբություն, գերություն,
  Յարի դարդն է, որ դժվար է, ծանր է շա՜տ:[2]
- Զույգ հյուսքերդ զույգ լարերն են ռոբաբիս,
  Ի՞նչ ես տանջում հալից ընկած խարաբիս.
  Թե սեր չունես, էլ ինչո՞ւ ես հայտնվում
  Կեսգիշերվա երազներում ու ճամփիս:[3]

## Աղբյուրներ


1. ↑ 1,0 1,1 (2004) Արմանուշ Կոզմոյան՝ *Պարսից պոեզիայի ընտրանի*: Մուղնի հրատարակչություն, 81: ISBN 99941-33-16-0:
2. ↑ (2004) Արմանուշ Կոզմոյան՝ *Պարսից պոեզիայի ընտրանի*: Մուղնի հրատարակչություն, 84: ISBN 99941-33-16-0:
3. ↑ (2004) Արմանուշ Կոզմոյան՝ *Պարսից պոեզիայի ընտրանի*: Մուղնի հրատարակչություն, 89: ISBN 99941-33-16-0:


Ստացված է «http://hy.wikiquote.org/w/index.php?title=Բաբա_Թահեր&oldid=13399» էջից
Կատեգորիաներ: Բանաստեղծներ | Պարսիկներ

---

- Այս էջը վերջին անգամ փոփոխվել է ժամը 10:32-ին, 3 Մայիսի 2011 թվին։
- Տեքստը տեղադրված է Քրիեյթիվ Քոմոնս Հղման-Համանման տարածման թույլատրագրի ներքո, առանձին դեպքերում հնարավոր են հավելյալ պայմաններ։ Մանրամասնությունների համար այցելեք՝ Օգտագործման պայմաններ։

# բաբա - բացատրություն

1) տես Փափա:

2) յի, գ. (գվռ-.): Հայրիկ:

3) տես ՏէրՊապ

# Baba - explanation

1) see Papa.

2) yi, c. (Gvr.): Dad:

3) see TerPapa.

http://bararanonline.com/%D5%A2%D5%A1%D5%A2%D5%A1